ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով)՝ բյուջետային հայտերի կազմման գործընթացը առավել թափանցիկ, ներառական, ինչպես նաև ծախսային ծրագրերը առավել նպատակային ու հիմնավոր դարձնելու համար 2019 թվականի հունիսի 7-ին ժամը 15:00-ին հրավիրում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին բաց քննարկման: Քննարկումը տեղի կունենա ք. Երևան, Բաղրամյան 24(Ազգային անվտանգության խորհրդի վարչական շենք) հասցեում, 3-րդ հարկի դահլիճ:

Միաժամանակ խնդրում ենք մինչև 2019 թվականի հունիսի 5-ը ժամը 18:00 ներկայացնել մասնակիցների տվյալները (անուն, ազգանուն, կազմակերպության անվանում)՝ դրանք ուղարկելով arman.khachatryan@ethics.am էլեկտրոնային փոստի հասցեին: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի) 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը կարող եք գտնել հետևյալ հղումով՝ http://www.ethics.am/files/legislation/334.pdf: